1601·

Ի թուականութեանս յաբեղական տումարի ՌԽԹ ամի, և ի յամսեան մարտի 21, ի Լով քաղաքի, աստուածասէր տանուտէրն Իվաշքո որդի Պր. Միքոի յայժմուս ժամանակի տեսաւ զայս անգին մարգարիտս, որ եղծեալ էր ի հիւթալի տեղւոջ, և փափագմամբ ետուր կրկին նորոգել, վասն իւր հոգւոյն և իւր ծնողացն և իւր արեան մերձաւորացն. զինք յիշեցէք ի բարին և դուք ասացէք զԱստուած ողորմին:.. Դարձեալ աղաչեմ, ով քահանայք սրբալի և ընթերցողք այսմ գրի, մի՛ մոռանայք զիս եղկելի զՅովհաննէս զվերստին կազմող գրի, որ զսուրբ աւետարանս Յիսուսի կապեցի, և այլն: [Աւետարան ի Լեհկերկ]:

1603·

Գրեցաւ ի թվ. Հայոց ՌԾԲ ամի, ի յերկիրն Իլախաց, ի քաղաքն Զամոսցայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին. ի ժամանակս հայրապետութեան Հայոց Տէր Մելքիսեթեկին, և թագաւորութեանն Իլախաց Զիկմունդին, և զօրավարին իւրոյ Յովանէսին, որ կոչի իլախերէն՝ Եան, և ըստ հայրենակցութեան Զամոցքի. որ և ըստ անուան իւրոյ չինեաց զքաղաքս զայս և անուանեաց Զամոսցա. և յայսմ ամի կատարեցաւ բարաւոր դրանց քաղաքիս: Արդ ի յանգ հասեալ գրոցս, աղաչեմ զվերծանողքդ յիշել զանարժան գրիչս Յակոբ երէցս, որ մեծաւ փափագանօք գրեցի զսա յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց. և որ յիշէքդ՝ յիշեալ լիջիք, և այլն:

1603–4·

... Արդ լուեալ (զվարս) զայսքան աստուածազգեաց խաչակրօն և զանազան արանց և կանանց և կրօնաւորաց և ամենայն գերամաքուր խմբից դասուց մարտիրոսաց, որք զարիւն իւրեանց ետուն փոխանակ գառինն Աստուծոյ, ցանկացող եղեալ Սրբոցս և գրոցս՝ սրբասէր և աստուածասէր տիկինն Կատարինայն և Կերուխնայն, և ետուն գրել զսուրբ գիրքս զայս յիշատակ հոգւոյ իւրեանց և ծնողաց իւրեանց:.. Արդ գրեցաւ սուրբ գիրքս ի թվ. Հայոց ՌԾԲ, ի հայրապետութեան Տեառն Մելքիսեդեկի և ի թագաւորութեան Գ Զիկմոնտին, ի քաղաքս որ կոչի Լով, ընդ հովանեաւ Սրբուհւոյ Աստուածածնին եկեղեցւոյն. ձեռամբ մեղաւոր և անարժան և անիմաստ գրչի Ղազար դպրի, ի խնդրոյ աստուածասէր տիկնոջն Կատարինէին: Եւ արդ, ես յետինս ի գրչաց անարժան և մեղաւորս, մանուկ էի հասակաւ և դպիր ի Բաբերդ քաղաքի, պատահմամբ ան Տաճկաց ձեռքն անկայ, և խիստ տանջանօք և չարչարանօք ազատեցայ ի ձեռաց նոցա, նախախնամութեամբ և գթութեամբն Աստուծոյ ամենակալին. և եկեալ ի Լով քաղաքն Ըռուզաց, ընկալան զիս արք տեղւոյն այնորիկ, և ետուն ինձ յարկ մի, և ասացին, թէ ծառայեա Ս. Աստուածածնին. և անդ և ի ծառայելս իմում՝ բազում աշխատութեամբ